ԵԷԴ/3716/02/17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՃԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

16 հունվարի 2023 թվական ք. Երևան

ուսումնասիրելով ըստ հայցի՝ Ալվարդ Շագոյանի ընդդեմ Վերգինե Սարգսյանի, երրորդ անձինք՝ Մկրտիչ Սարգսյանի, Գոհար Կարապետյանի, Մարինե Սարգսյանի, Ժասմեն Սարգսյանի, Անուշավան Սարգսյանի՝ համատեղ սեփականություն հանդիսացող անշարժ գույքում պարտապանի բաժնեմասն առանձնացնելու և պարտավորության չափով դրա նկատմամբ բռնագանձում տարածելու, իսկ բաժնեմասի առանձնացման անհնարինության դեպքում հրապարակային սակարկություններով անշարժ գույքը վաճառելու և պարտապանի բաժնեմասի վրա բռնագանձում տարածելու պահանջների մասին, թիվ ԵԷԴ/3716/02/17 գործով ենթակայության մասին վեճը լուծելու համար Վճռաբեկ դատարանի նախագահին դիմելու վերաբերյալ ՀՀ սնանկության դատարանի՝ 2022 թվականի դեկտեմբերի 26-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. Ալվարդ Շագոյանը 2017 թվականի նոյեմբերի 15-ին հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ Վերգինե Սարգսյանի, երրորդ անձինք՝ Մկրտիչ Սարգսյանի, Գոհար Կարապետյանի, Մարինե Սարգսյանի, Ժասմեն Սարգսյանի, Անուշավան Սարգսյանի՝ համատեղ սեփականություն հանդիսացող անշարժ գույքում

պարտապանի բաժնեմասն առանձնացնելու և պարտավորության չափով դրա նկատմամբ բռնագանձում տարածելու, իսկ բաժնեմասի առանձնացման անհնարինության դեպքում՝ հրապարակային սակարկություններով անշարժ գույքը վաճառելու և պարտապանի բաժնեմասի վրա բռնագանձում տարածելու պահանջների մասին:

2. Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ 2017 թվականի նոյեմբերի 17-ի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ:

3. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2022 թվականի նոյեմբերի 25-ի որոշմամբ գործը հանձնվել է Սնանկության դատարանի քննությանը:

4. Սնանկության դատարանի՝ 2022 թվականի դեկտեմբերի 26-ի որոշմամբ գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն ուղարկվել է ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին:

5. Գործը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2023 թվականի հունվարի 9-ին:

<u>Ենթակայության վերաբերյալ վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

6. 2017 թվականի նոյեմբերի 15-ին դիմելով դատարան՝ Ա.Շագոյանը պահանջել է համատեղ սեփականության իրավունքով Վ.Սարգսյանին և երրորդ անձանց պատկանող՝ Արարատի մարզի Շահումյան համայնքի Հոկտեմբերյան փողոցի թիվ 88 հասցեում գտնվող անշարժ գույքից առանձնացնել Վ.Սարգսյանի բաժնեմասը՝ բռնագանձում տարածելու նպատակով, իսկ անհնարինության դեպքում՝ հրապարակային սակարկություններով վաճառել անշարժ գույքը և պարտապանի բաժնեմասի վրա բռնագանձում տարածել[1]:

7. Թիվ ՍՆԴ/0988/04/22 սնանկության գործով Սնանկության դատարանի՝ 2022 թվականի մայիսի 6-ին կայացրած վճռով, Վ.Սարգսյանը սնանկ է ճանաչվել: Սնանկության դատարանի՝ 2022 թվականի սեպտեմբերի 1-ի որոշմամբ, հաստատվել է Վ.Սարգսյանի սնանկության գործով պարտատերերի պահանջների վերջնական ցուցակը, որում ընդգրկվել են նաև Ա.Շագոյանի չապահովված պահանջները[2]:

---

[1] Տե՛ս քաղաքացիական գործը, հատոր 1-ին, թերթեր 5-6:
[2] Տե՛ս datalex.am տեղեկատվական համակարգ, գործ թիվ ՍՆԴ/0988/04/22:

8. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի՝ 2017 թվականի նոյեմբերի 6-ի տեղեկանքի համաձայն՝ Արարատի մարզի Շահումյան համայնքի Հոկտեմբերյան փողոցի թիվ 88 հասցեում գտնվող անշարժ գույքը, ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով, գրանցված է Մ.Սարգսյանի, Գ.Կարապետյանի, Մ.Սարգսյանի, Ժ.Սարգսյանի, Ա.Սարգսյանի և Վ.Սարգսյանի անվամբ[3]:

9. Հղում կատարելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասին, 24-րդ հոդվածի 2-րդ մասին, «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի 2-րդ մասին, 18-րդ հոդվածի 1-ին մասին, 25-րդ հոդվածի 3-րդ մասին՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2022 թվականի նոյեմբերի 11-ի որոշմամբ գործն ըստ ենթակայության ուղարկել է ՀՀ սնանկության դատարան՝ այն պատճառաբանությամբ, որ *«(...) Սույն գործով հայցի առարկան կազմող պահանջն(ներ)ը, հայցի առարկայի օբյեկտը, քաղաքացիական գործին մասնակցող անձանց շրջանակը, սնանկ ճանաչված պարտապան/ներ/ի՝ սույն քաղաքացիական գործով գործին մասնակցող անձ հանդիսանալը բավարար է արձանագրելու այն իրողությունը, որ գործով կայացվելիք վերջնական դատական ակտը հանգեցնելու է պարտապանի գույքի և գույքային իրավունքների ու պարտականությունների ծավալի փոփոխության, որպիսի պայմաններում քաղաքացիական գործն իր հատկանիշներով դասվում է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով սահմանված գործերի շարքին, և սույն քաղաքացիական գործով վեճը կարող է ազդել պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա, որպիսի հարցը լուծելու բացառիկ իրավասությունը տրված է մասնագիտացված դատարանին՝ ի դեմս սնանկության գործը քննող (նախագահող) դատավորի:*

Հետևաբար, Դատարանը հանգում է այն եզրակացության, որ առկա են բավարար հիմքեր սույն քաղաքացիական գործն օրենքով սահմանված կարգով ՀՀ սնանկության դատարանին փոխանցելու համար:

Ինչ վերաբերվում է Վերգինե Սարգսյանի կողմից ներկայացված՝ քաղաքացիական գործի վարույթը կարճելու մասին միջնորդությանը, Դատարանը գտնում է, որ

[3] Տե՛ս քաղաքացիական գործը, հատոր 1-ին, թերթ 11:

«Մնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով սահմանված իրավակարգավորման շրջանակներում գործը ՀՀ սնանկության դատարան փոխանցելու պայմաններում, միջնորդությունը ենթակա է մերժման»[4]*:*

10. Հղում կատարելով «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, 4-րդ հոդվածի 3-րդ և 6-րդ մասերին, 39-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետին, ՀՀ սնանկության դատարանը 2022 թվականի դեկտեմբերի 26-ի որոշմամբ գտել է, որ սույն գործը ենթակա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին և այդ առնչությամբ դիմել է Վճռաբեկ դատարանի նախագահին՝ նշելով հետևյալը. *«(…) Ըստ էության, սնանկ ճանաչված պատասխանողի դեմ ներկայացված է գույքի հանձնման, իսկ անհնարինության դեպքում գույքի վաճառքից ստացված գումարի բռնագանձման պահանջ, որպիսի պայմաններում Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը պետք է նախ քննարկման առարկա դարձներ թիվ ԵԷԴ/3716/02/17 քաղաքացիական գործով վարույթը «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով սահմանված հիմքով կարճելու հնարավորության հարցը, հետո միայն քննարկեր «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով սահմանված իրավակարգավորման շրջանակներում նշված գործը Հայաստանի Հանրապետության սնանկության դատարան փոխանցելու հարցը: Մինչդեռ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը ըստ էության քննարկել է միայն «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով սահմանված իրավակարգավորման շրջանակներում թիվ ԵԷԴ/3716/02/17 քաղաքացիական գործը Հայաստանի Հանրապետության սնանկության դատարան փոխանցելու հարցը, որով էլ պայմանավորել է գործի վարույթը կարճելու մասին միջնորդությունը մերժելը:*

Վերոգրյալի հաշվառմամբ, (…) գտնում եմ, որ թիվ ԵԷԴ/3716/02/17 քաղաքացիական գործը Հայաստանի Հանրապետության սնանկության դատարանում քննության ենթակա չէ, քանի դեռ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից չի քննարկվել նշված քաղաքացիական գործով վարույթը «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով սահմանված հիմքով կարճելու հնարավորության հարցը»[5]*:*

---

[4] Տե՛ս գործը, հատոր 3, թերթեր 26-28:
[5] Տե՛ս գործը, հատոր 3, թերթեր 150-152:

<u>Վճռաբեկ դատարանի նախագահի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի նախագահի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. արդո՞ք թիվ ԵԷԴ/3716/02/17 քաղաքացիական գործն ըստ հայցի՝ Ալվարդ Շագոյանի ընդդեմ Վերգինե Սարգսյանի, երրորդ անձինք՝ Մկրտիչ Սարգսյանի, Գոհար Կարապետյանի, Մարինե Սարգսյանի, Ժասմեն Սարգսյանի, Անուշավան Սարգսյանի՝ համատեղ սեփականություն հանդիսացող անշարժ գույքում պարտապանի բաժնեմասն առանձնացնելու և պարտավորության չափով դրա նկատմամբ բռնագանձում տարածելու, իսկ բաժնեմասի առանձնացման անհնարինության դեպքում՝ հրապարակային սակարկություններով անշարժ գույքը վաճառելու և պարտապանի բաժնեմասի վրա բռնագանձում տարածելու պահանջների մասին, ենթակա է Մնանկության դատարանին:

12. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Քաղաքացիական գործերը ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում, բացառությամբ «Մնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի»:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Դատարանը գործը հանձնում է սնանկության դատարանի քննությանը, եթե գործը քննելիս պարզվել է, որ այն ենթակա է քննության սնանկության դատարանում»:*

«Մնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Մնանկության գործերի վարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության սնանկության դատարանում (...): Մնանկության գործը վարվում է դատավորի կողմից միանձնյա»:*

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Մնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների, երրորդ անձին պատկանող ապահովված իրավունքի առարկայի, պարտապանի և պարտատիրոջ մասնակցությամբ կնքված, ներառյալ՝ պարտավորությունների կատարման ապահովման միջոցների պայմանագրերի առնչությամբ ծագած և սնանկ ճանաչելու հարցի լուծման կամ պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա ազդող վեճերով քաղաքացիական գործերը, բացառությամբ կառավարչի կողմից ներկայացվող հայցերով կամ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման» մասին Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա ներկայացվող հայցերով հարուցվող քաղաքացիական գործերի, քննում է*

սնանկության գործը վարող դատավորը նույն սնանկության գործի շրջանակում՝ որպես առանձին քաղաքացիական գործեր: Սույն մասով սահմանված՝ պարտապանի և պարտատիրոջ մասնակցությամբ կնքված, ներառյալ՝ պարտավորությունների կատարման ապահովման միջոցների պայմանագրերի առնչությամբ ծագած վեճը ենթակա է քննության սնանկության դատարանում որպես առանձին քաղաքացիական գործ՝ անկախ պարտապանի սնանկ ճանաչված լինելու հանգամանքից»:

13. Սույն որոշման նախորդ կետում վկայակոչված իրավադրույթներից հետևում է, որ քաղաքացիական գործերը, որպես կանոն, ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում: Այս ընդհանուր կանոնից բացառություն նախատեսված է «Սնանկության մասին» ՀՀ օրենքով: Նշված օրենքի՝ վերը վկայակոչված իրավակարգավորումներից հետևում է, որ սնանկության գործերի վարումն իրականացնում է Սնանկության դատարանը՝ միաժամանակ իրականացնելով նաև սնանկության գործով պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա ազդեցություն ունեցող այն քաղաքացիաիրավական վեճերի քննությունը, որոնք համապատասխանում են «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով սահմանված նախապայմաններին:

14. «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետի համաձայն՝ *«Պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո դատարանը (…) պարտապանին սնանկ ճանաչելու, դիմումը մերժելու կամ դիմումն առանց քննության թողնելու, ինչպես նաև գործի վարույթը կարճելու մասին անհապաղ տեղեկացնում է՝ (…), Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանին՝ Հայաստանի Հանրապետության բոլոր դատարաններին ծանուցելու համար, (…)»:*

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ *«Պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից՝ կարճվում կամ ավարտվում են պարտապանից գումարի բռնագանձման կամ գույք հանձնելու պահանջով քաղաքացիական, վարչական կամ արբիտրաժային տրիբունալի վարույթում գտնվող գործերը, և պարտապանի դեմ պարտատերերի պահանջները կարող են ներկայացվել սնանկության վարույթի շրջանակներում՝ սույն օրենքով սահմանված ժամկետներում և կարգով»:*

15. Սույն որոշման նախորդ կետում վկայակոչված իրավակարգավորումների վերլուծությունից հետևում է, որ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններն իրենց վարույթում քննվող քաղաքացիական գործերով

պատասխանողների՝ սնանկ ճանաչված լինելու վերաբերյալ տեղեկատվություն ստանալու դեպքում, առաջին հերթին պետք է քննարկման առարկա դարձնեն այդ գործերի նկատմամբ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի կիրառման հնարավորության հարցը:

Ընդ որում, պարտապանին սնանկ ճանաչելու վերաբերյալ վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը կիրառելի է այնպիսի գործերի նկատմամբ, որոնցով հայցվորի կողմից պատասխանողին ուղղված է գումարի բռնագանձման պահանջ կամ գույք հանձնելու պահանջ*:* Նշվածից հետևում է, որ վկայակոչված իրավադրույթը կիրառելի է հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում՝

ա) քաղաքացիական գործով պատասխանողը դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով սնանկ է ճանաչվել,

բ) քաղաքացիական գործով սնանկ ճանաչված պատասխանողի դեմ ներկայացված է գումարի բռնագանձման կամ գույք հանձնելու պահանջ:

16. Սույն քաղաքացիական գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ.

- 2017 թվականի նոյեմբերի 15-ին դիմելով դատարան՝ Ա.Շագոյանը պահանջել է համատեղ սեփականության իրավունքով Վ.Սարգսյանին և երրորդ անձանց պատկանող՝ Արարատի մարզի Շահումյան համայնքի Հոկտեմբերյան փողոցի թիվ 88 հասցեում գտնվող անշարժ գույքից առանձնացնել Վ.Սարգսյանի բաժնեմասը՝ բռնագանձում տարածելու նպատակով, իսկ անհնարինության դեպքում՝ հրապարակային սակարկություններով վաճառել անշարժ գույքը և պարտապանի բաժնեմասի վրա բռնագանձում տարածել[6], որը Երևան քաղաքի Էրեբունի և Նաբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասությանի դատարանի՝ 2017 թվականի նոյեմբերի 17-ի որոշմամբ ընդունվել է վարույթ[7],

- թիվ ՍՆԴ/0988/04/22 սնանկության գործով Սնանկության դատարանի՝ 2022 թվականի մայիսի 6-ին կայացրած վճռով Վ.Սարգսյանը սնանկ է ճանաչվել: Սնանկության դատարանի՝ 2022 թվականի սեպտեմբերի 1-ի որոշմամբ հաստատվել է Վ.Սարգսյանի

[6] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:
[7] Տե՛ս սույն որոշման 2-րդ կետը:

սնանկության գործով պարտատերերի պահանջների վերջնական ցուցակը, որում ընդգրկվել են նաև Ա.Շագոյանի չապահովված պահանջները[8],

- Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի՝ 2017 թվականի նոյեմբերի 6-ի տեղեկանքի համաձայն՝ Արարատի մարզի Շահումյան համայնքի Հոկտեմբերյան փողոցի թիվ 88 հասցեում գտնվող անշարժ գույքը ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով գրանցված է Մ.Սարգսյանի, Գ.Կարապետյանի, Մ.Սարգսյանի, Ժ.Սարգսյանի, Ա.Սարգսյանի և Վ.Սարգսյանի անվամբ[9],

- հղում կատարելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասին, 24-րդ հոդվածի 2-րդ մասին, «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի 2-րդ մասին, 18-րդ հոդվածի 1-ին մասին, 25-րդ հոդվածի 3-րդ մասին՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2022 թվականի նոյեմբերի 11-ի որոշմամբ գործն ըստ ենթակայության ուղարկել է ՀՀ սնանկության դատարան՝ այն պատճառաբանությամբ, որ գործով կայացվելիք վերջնական դատական ակտը հանգեցնելու է պարտապանի գույքի և գույքային իրավունքների ու պարտականությունների ծավալի փոփոխության, որպիսի պայմաններում քաղաքացիական գործն իր հատկանիշներով դասվում է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով սահմանված գործերի շարքին, և սույն քաղաքացիական գործով վեճը կարող է ազդել պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա, որպիսի հարցը լուծելու բացառիկ իրավասությունը տրված է մասնագիտացված դատարանին՝ ի դեմս սնանկության գործը քննող (նախագահող) դատավորի, հետևաբար, առկա են բավարար հիմքեր սույն քաղաքացիական գործն օրենքով սահմանված կարգով ՀՀ սնանկության դատարանին փոխանցելու համար[10],

- հղում կատարելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, 4-րդ հոդվածի 3-րդ և 6-րդ մասերին, 39-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետին՝ ՀՀ սնանկության դատարանը 2022 թվականի դեկտեմբերի 26-ի որոշմամբ գտել է, որ սույն

---

[8] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:
[9] Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:
[10] Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

գործը ենթակա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին և այդ առնչությամբ դիմել է Վճռաբեկ դատարանի նախագահին՝ նշելով, որ սնանկ ճանաչված պատասխանողի դեմ ներկայացված է գույքի հանձնման, իսկ անհնարինության դեպքում՝ գույքի վաճառքից ստացված գումարի բռնագանձման պահանջ, որպիսի պայմաններում Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը պետք է նախ քննարկման առարկա դարձներ թիվ ԵԷԴ/3716/02/17 քաղաքացիական գործով վարույթը «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով սահմանված հիմքով կարճելու հնարավորության հարցը, հետո միայն քննարկեր «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով սահմանված իրավակարգավորման շրջանակներում նշված գործը ՀՀ սնանկության դատարան փոխանցելու հարցը: ՀՀ սնանկության դատարանն արձանագրել է, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանն ըստ էության քննարկել է միայն «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով սահմանված իրավակարգավորման շրջանակներում թիվ ԵԷԴ/3716/02/17 քաղաքացիական գործը ՀՀ սնանկության դատարան փոխանցելու հարցը, որով էլ պայմանավորել է գործի վարույթը կարճելու մասին միջնորդությունը մերժելը: Արդյունքում ՀՀ սնանկության դատարանը գտել է, որ թիվ ԵԷԴ/3716/02/17 գործը ՀՀ սնանկության դատարանում քննության ենթակա չէ, քանի դեռ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից չի քննարկվել նշված գործով վարույթը «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով սահմանված հիմքով կարճելու հնարավորության հարցը[11]:

17. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 12-15-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո, հարկ է նկատել, որ սույն գործով պատասխանող Վ.Սարգսյանի դեմ ներկայացվել են համատեղ սեփականություն հանդիսացող անշարժ գույքում պարտապանի բաժնեմասն առանձնացնելու և պարտավորության չափով դրա նկատմամբ բռնագանձում տարածելու, իսկ բաժնեմասի առանձնացման անհնարինության դեպքում՝ հրապարակային սակարկություններով անշարժ գույքը վաճառելու և պարտապանի բաժնեմասի վրա բռնագանձում տարածելու պահանջներ, որից հետո, Սնանկության դատարանի՝ 2022 թվականի մայիսի 6-ի վճռով, պատասխանող Վ.Սարգսյանը ճանաչվել է սնանկ:

[11] Տե՛ս սույն որոշման 10-րդ կետը:

Նման պայմաններում, հարկ է արձանագրել, որ սույն գործի փաստական հանգամանքների համատեքստում՝ պատասխանող Վ.Սարգսյանի դեմ ներկայացված հայցապահանջն իր բնույթով համապատասխանում է «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետին, քանի որ պարտատեր Ա.Շագոյանը դատարան ներկայացված հայցապահանջով ըստ էության նպատակ է հետապնդել պարտապան Վ.Սարգսյանին և երրորդ անձանց համատեղ սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքից պարտապանի բաժինն առանձնացնելու և դրա վրա բռնագանձում տարածելու եղանակով ստանալ իր պահանջի բավարարում: Հետևաբար, Մնանկության դատարանի՝ 2022 թվականի մայիսի 6-ի վճռով, Վ.Սարգսյանի՝ սնանկ ճանաչված լինելու պարագայում, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, կոնկրետ դեպքում, պետք է առաջնորդվեր ոչ թե «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով, այլ Մնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով: Այլ կերպ, սույն գործով ներկայացված հայցապահանջը «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով նախատեսված պայմաններին համապատասխանելու պարագայում, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը չպետք է քննարկման առարկա դարձներ քաղաքացիական գործը Մնանկության դատարան հանձնելու համար անհրաժեշտ՝ «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասով ամրագրված նախապայմանների առկայության հարցը:

18. Վերը բերված պատճառաբանություններով գտնում եմ, որ թիվ ԵԷԴ/3716/02/17 քաղաքացիական գործն ըստ հայցի՝ Ալվարդ Շագոյանի ընդդեմ Վերգինե Սարգսյանի, երրորդ անձինք՝ Մկրտիչ Սարգսյանի, Գոհար Կարապետյանի, Մարինե Սարգսյանի, Ժասմեն Սարգսյանի, Անուշավան Սարգսյանի՝ համատեղ սեփականություն հանդիսացող անշարժ գույքում պարտապանի բաժնեմասն առանձնացնելու և պարտավորության չափով դրա նկատմամբ բռնագանձում տարածելու, իսկ բաժնեմասի առանձնացման անհնարինության դեպքում՝ հրապարակային սակարկություններով անշարժ գույքը վաճառելու և պարտապանի բաժնեմասի վրա բռնագանձում տարածելու պահանջների մասին, ենթակա չէ Մնանկության դատարանին:

19. Վերոգրյալի հիման վրա, գտնում եմ, որ Ալվարդ Շագոյանի հայցադիմումի հիման վրա հարուցված թիվ ԵԷԴ/3716/02/17 քաղաքացիական գործը ենթակա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քննությանը:

Վերոգրյալի հաշվառմամբ և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

թիվ ԵԷԴ/3716/02/17 քաղաքացիական գործն ըստ հայցի՝ Ալվարդ Շագոյանի ընդդեմ Վերգինե Սարգսյանի, երրորդ անձինք՝ Մկրտիչ Սարգսյանի, Գոհար Կարապետյանի, Մարինե Սարգսյանի, Ժասմեն Սարգսյանի, Անուշավան Սարգսյանի՝ համատեղ սեփականություն հանդիսացող անշարժ գույքում պարտապանի բաժնեմասն առանձնացնելու և պարտավորության չափով դրա նկատմամբ բռնագանձում տարածելու, իսկ բաժնեմասի առանձնացման անհնարինության դեպքում հրապարակային սակարկություններով անշարժ գույքը վաճառելու և պարտապանի բաժնեմասի վրա բռնագանձում տարածելու պահանջների մասին, ենթակա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ